ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Մհեր Մկրտչյան 5բ, հեռ.՝ (+374 10) 54 56 37, ֆաքս (+374 10) 54 39 85
էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«29» 03 20 15թ.

No ԼՀՇ-647

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպության ծրագրերի
համակարգող Լիանա Դոյոդոյանին

Ի պատասխան Ձեր 2015 թվականի մարտի 19-ի գրության՝ հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին» թիվ 194-Ն որոշմանը (կցվում է) համապատասխան հատկացված է թվով հինգ ծառայողական ավտոմեքենա, որից երեքը սպասարկում են Հանձնաժողովի համապատասխան պաշտոնատար անձանց, իսկ մյուս երկուսը շահագործվում են Հանձնաժողովի և Հանձնաժողովի աշխատակազմի օրենսդրությամբ նախատեսված համապատասխան գործառույթների իրականացման նպատակով:

Առդիր «11» թերթ:

Ա. Շաբոյան

Իրավաբանական վարչություն, հեռ 56-27-78,
Կատ.՝ Գ. Մուսայելյան